

**"Droschak"**  
ORGANE  
de la Fédération  
Révolté Arménienne.

# Роды

**432. PHONOGRA  
PHIQUE**  
Adressé à  
**L.F. DROCHAS**  
Rédaction du  
**LIBRARY**  
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵԴԱՓՈՒԽԱԿԱՆ ԴԱՅՆԱՅՎԱԼՔԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿԵՑՑԵ ՅԱՆԴԻՆՈՒԹԻՒՆԸ

Կ՞ոչ պիտի անե Յունաստանը — ահա այն տանջող հարցը, որ երեք նկարւուն եր բոլոր գէվքերի վրայ...

Խեց պիտի անէ արդեօք թղուկ Յունաստանը եւրա-  
պական ուշախմառումի առաջ, որը իր ցուրտ —բանակալա-  
կան ռազմ խմբագրել էր ուռական գիւղանատան մէջ:

Մի շանիք էր դա, որ ելեքտրական արագութեամբ  
թափանցեց քաղաքակիրճ աշխարհի բոլոր նայրերը և  
տարածեց ամենալեքը մի արտասալվոր յուրամ, մի դռ-  
դաշնող անհանգստութիւն:

Յանաստանը կը խնարհի՝—մարդարեանում էին  
ումանք:

Զի՞ խոնարհութ—հակառակում՝ եթև ուրիշները:

Այ խոնարհւի, ապա ի՞նչ պիտի անե։ Մի՛թէ հել-  
շնական կառագործութիւնը ամփան խիզախ կը դժուի-  
սր իր կացրիզները գեմ կը գնէ ներդաշնակ և բազա-  
յի կարող ցանկութեան Մի՛թէ նա ամփան յանդուգն  
կը մնի, որ իր անմիտ քայլով կը վաճանգէ ազգերի  
խաղաղութիւնը։

Այս, յանդուռն եղաւ. Յունաստանը՝ 'Սա սկսեց—և  
ակրպություն շարունակում' է սիրածը:

Նախ խեդացին խիզախի վրայ, Եազդութին, Եանակեցին  
Նրան, արհամարհեցին իր մի անձան մեծութիւն, մի  
թղթէ ոյժ։ Խայթ որ աւելը այդ կեռ Եազդը փառեց  
բարչ տաստանի վութեան։ Յաւստամի ընթացքը վճա-  
կան եռաւ, Հաստատուն։

Խան է արքեպոս ոյժ տավա հեղինական գիւղատան  
թունաւոր սպառնացիներ են, որ չըրտում է պաշտա-  
նական լուսաւան առև սիւնանամ հասկով:

Միւս կողմից՝ բաւան սկզբանվիւն ու թանգավոր զայտուակներ են, որ ցանք է չառաբակական կարծիքը նոյն Առևեստակին:

Մի կողմից բարձրմ են. դմիլուկել էս, թղթիկ, գար-  
մի հարստաքնը Անտառվարչից ապա թէ ոչ կամ  
միզդ. անդունդ գերիթաս, կամ թէ երսարաւուեան  
փուռեն. իսուժանաւուն:

Եթես կուտիր պարք և տախո Խըլովայի ցնուածէ Հա-

սարակական կարծիքը. յառաջ գնա, խիզախ, լրացրու արդեն սկսած գօթեգ, քո գեմ է եսամոլ ըռնակալութիւնը, բայց մարգկութեան լաւագոյն մասը քնկ Տես ՀԱ:

Ո՞րն է արդեօք աւելի մեծ գրաւական Ավելութիւնի կառավարութեան համար . . .

Հրաշունչ լեռան նման բռնկւել է ամբողջ Յունաստանը: Հայրենական ապօպութիւնը պատճել է բաժանդակ երկրին:

Յոյն երիտասարդութիւնը կռւի դաշտ է շատապամ, յունական կալքիտալիքաները լայն բաց են արել իրենց գրանիտները։ Ամեն կողմից միշտներ են խոստացում հայրենի կառավարութեան, թուղ միայն սկսէ նա վազուց փափագած պատերազմը . . .

Հայրենասիրութեան ու անձնութութեան արդ փար-  
լուն փաստերի գիմաց ոլլքան ցաւ է յիշել Հայկական  
իրականութիւնը: Ալքան ածայի է զեռ մեր Հոգեկան  
զգացմանըների գաշտը: Հայաստանը ևս ունի Հա-  
յուսաներ:

Տայց նրանք կարծրացել են, քարացել շահամութեան թանձր ժանդով եածիւնը են նրանց նեղ հոգիները նրանք մինչև իսկ չեն ձկում՝ զեթ փրկութեան առջև տակ գույն պատճեն կատարում են առաջին ամպել իրենց առջև կանգնած թիւլք բարբարութեան էնթուանի ուշերի բացցն ու մերկութիւնը . . .

Զայն տւին նորոգայից սամնեակ հաղարաւոր անձնուէր անհասներ բարձրացաւ. Խայրօննեան Անդլիան և Գարդիքադնեան Խաւլիան,—Խտմշիան, որ սովոր է միշտ յանուն պէջ իրէափների ծառանեցնել. Կարմիւազըն գրուակները:

Բարբատմների Նմանն պաշտելի հերոսները շարժման  
դլութ անցան Ակուեց կամաւորների արձաւանքը, ան-  
հայտ խանդավառութեամբ, ու ցնծադին ազաղակներով  
բոյան է միաբերան բռնտացին. ոդեաի Արքական:

Եւ այսուհեղ Արդիպելագի ամիերին հեղթեական բռուն  
հայրինասիրութիւնը դիմաւորեց Նրանց քարձրագուց ովզ  
սաննաշենքով, ո ի կիցը ազատ կրետեն, անկցի՛ տամակա-  
կան բռնակայութիւնը” :

Այսօր կրեակի տզատուվմեան գործը կիսով չէ պարզէն իրացրեած է Ծով կամավարութեան շահ դուռն միմարեք ստիպեց պատմութիւններին մանաւել:

Կրետէի ինքնավարութիւնը:

Բայց Կրետէի փափագն է լիակատար ազատութիւն: Ավագ կարող է երաշխաւորել, որ նոյն իսկ նրա սոսկ անւանական կախումը սուլթանից ազատ կը կացուցանէ նրան թիւրբական կամայականութիւններից: Մի՞թէ ան-իշխանական թիւրբիան օրէնք է ճանաչում.

Կրետէի բաղձանքն է միացում Սար-Հայրենիքի հետ:

Հարցը սուր կերպարանքով է դրւած: այդ հարցը տանում է դէպի անխուսափելի ընդհարում Յունաստանի և Թիւրբիայի մէջ որովհետեւ վերջինս նոյն իսկ կրպի լինքնավարութեան նկատմամբ լիակատար համաձայնութիւն չի տալիս:

Պատերազմ Յունաստանի և Թիւրբիայի մէջ . . . իսկ պերսպեկտիվում՝ այնտեղ էլ սպառնում է մի ընդհանուր աղետ, համաեւրոպական մի աչուկի կատարովիա . . .

Հօրիզոնը օրից օր մուժը ու ապագան մուժն է, անորոշ սակայն բախտը ըստ երեսին ժպտում է Յունաստանին:

“Ներդաշնակ միութիւնից” արդէն հրաժարւելու նշաններ է ցոյց տալիս Անգլիան:

Տաճկական նաւատորմիզը հիւանդ է, կարօտ արմատական բուժման. իսկ զօրքը շան պէս քաղցած է:

Դիսցիպլին չկայ. քաղցածից ի՞նչ դիսցիպլին . . .

Յունաստանը դիմում է առաջ և կը դիմէ անսասան: Թողարկած գլախն որոնայ պաշտօնական Եւրոպան, թողարկած գլախն ու բազմագլխն տիրանները անողորմ հարւածներով խրոխտան նրան—նա կերթայ առաջ, մինչեւ որ կիրագործէ իր օրբազան առաքելութիւնը:

Նրա կողմն է ամբողջ Եւրոպայի բուռն ոգենորութիւնը, նրա կողմն են հարիւրաւոր կամաւոր խմբերը և բիւրաւոր անհատների նիւթական աջակցութիւնը:

Յուսանք . . .

Յուսանք, որ սոսկ ինքնավարութեամբ չի սահմանափակի իրերի դրութիւնը այդ մարտիրոս կղզու վրայ, այլ որ կը շարունակի ազատական կոիւը, մինչեւ որ ընդմիշտ կը վերանան այնտեղից տաճկական բանութիւնն ու կամայականութիւնը:

Կեցցէ կրետէն, որ ապստամբ էր տասնեակ տարիներից ի վեր և որ մնաց ապստամբ:

Կեցցէ Եւրոպական կամաւոր հերոսների արշաւանքը:

Կեցցէ յանդուգն ու խիզախ Յունաստանը:

Եռունիլ Քազմամբոխ փողոցները կանուրանան: Երկիւղը փողոցներէն տուն կը փախցնէ մարդիկ, որոնք իրենց սենեակները պինդ փակելով՝ կը յուսան ապահովութիւն գտնել կարծելով որ մարդասպան ձեռքը չէ կարող այնտեղ հասնիլ:

Աչա քանի օրէ, որ Բամազանը սկսեր է և Մուհամետի զաւակները իրենց օրերը կանցնեն ծոմապահութեան և աղօթքի մէջ: Այդ օրերուն հետ սկսեր է նաև կոտորածի երկիւղը որ շատերու երևակայութիւնով՝ աւելի սարսափելի պիտի ըլլայ, քան Օգոստոսի 14-ը: Եւ ամբողջ Պոլիս միայն ատով է զբաղւած, օրւան խօսակցութեան նիւթը այդ է: Հազիւ կը պատահի, որ մեկ բանիներ չը հաւատան ատոր և հադարս սրտով ու խելքը գլուխը իրենց գործին երթան: Մաքերը գրգռւած և սրտերը յուզւած են, անապահով գրութիւնը մարդոցմէ լիլած է՝ թէ ախորժակ, թէ հանգիստ քուն և թէ հոգու անդորրութիւն. լարւած և նեարդային ճնշող գրութիւն մ'է, որ կը տիրէ մարդիկներուն վրայ: Ի՞նչ պիտի ըլլայ: Ոչ ոք ոչինչ գիտէ: Կասկածը ամենուն սիրտը նետել կուտայ, ամենքը կը ըսն, որ ոբան մը կը ըլլայ “և սարսափահամակ կապասեն այդ ճակատագրական օրւան, երբ նորէն մարդկային արիւնը պիտի ողողէ Պոլսոյ փողոցները”:

Ճակատագրական օրը Բամազանի 15-ը կը համարէի: Այդ օրը Ոճրագործ-խալիֆան պիտի գնայ Սուհամետի ուղարկ ստու շինւած վերարկուն համբուրելու: Կը խօսին հայ յեղափոխականներու ուսմբերու և յերիտասարդ Թիւրբիային մասին: Հաւատացած են, որ ատոնց կողմէն սպանութեան փորձ մը պիտի ըլլայ Զարագործի սկ կեանքի դէմ. և եթէ տեղի ունենայ, յաջող կամ անյաջող, սարսափելի կոտորած ըլլալու է: Ոմանք ալ կը կարծեն՝ թէ կաւավարութիւնը ի՞նը այդպիսի դժոխային ծրագիր մը սարքած ըլլալու է կոտորած առաջ բերելու համար: Աս է միակ միջոցը իր հակառակորդներուն դէմ կուելու համար. այդ ճանապարհէն չի շեղիր, քանի որ անպատիժ կը մնայ քուստութիւնը:

Նոր կոտորածի երկիւղը այն աստիճան լուրջ բնաւորութիւն է առեր, որ նոյն իսկ դեսպանները կը զբաղւին ատով և մինչեւ իսկ ուստական դեսպանը միջամտեր ու կառավարութեան ուշադրութիւնն է հրաւիրեր:

Ի՞նչ ալ ըլլայ, կառավարութիւնը շան պէս կը դողայ յեղափոխականներէն, իսկ ժողովուրդը երկուքէն ալ կառավարութիւնը այն աստիճան կը վախնայ, որ Պոլսը զինուորական դրութեան մէջ է դրեր: Փողոցներուն մէջ դոգք աւելի կը պատահիք զինուորներու ոստիկաններու, ժանդարմերու և այլն, քան թէ գործի տէր մարդոց բացի այն, իւրաքանչիւր փողոց և անկիւն ունի իր ոստիկան զինուորը, քաղաքին մէջ կը պատին խօսմբ-խոսմբ՝ թէ հետեակ և թէ ձիւաւոր զօրքեր:

\* \*

Փետրւար 14-ին (ն. ա.)—Ճակատագրական օրը կը մօտենայ: Մարդոց սրտերը կուռին և կը տրոփեն: Ամեն կողմէ կը լսւի ու Ան, Ե՞րբ պէտք է անցնի սցի անիծած օրը, այս անդամ՝ ալ ազատւիմ’’: Թիւրբ, հայ, յոյն, Եւրոպացի սաստիկ վորովման մէջ են: Ամեն յարդ իրարու կը հարցնէ:

— Վաղը խանութ պիտի բանա՞:

## ՆԱՄԱԿ ՊՈԼԻՍ

— Զեմ գիտեր, եղբայր, կըսեն թէ վաղը (սուլթանը) վար պիտի առնեն. խանութ բանսա էշնահատակ կըսաս, չի բանսա, երկրորդ օրը բանտն ես. մարդ թնջը ընելը շւարած է Ընդհանուր յեղափոխութիւն կայ, ամեն մարդ ապահով տեղեր կապատանի, Քերա կամ կղզի կը դիմեն առհասարակ<sup>4</sup>:

Հասարակութեան երկիւղը լուրջ բնաւորութիւն առաւ, երբ կառավարութիւնը յաջողեցաւ ձեռք անցնել մեր թագստոցներէն մէկը, ուր կային ոռութեր: Այդ լուրջ կայծակի արագութեամբ տարածւեցաւ և սարսափ սիրոց: Ֆաւաւած կարծւած յեղափոխական մարմինը իր բոլոր ուժով վերակենդանացաւ հանրութեան առջև. չէ, ատոնք չեն մեռած և չեն մեռնիր, ատոնք այն տեսակ մարդիկ են, որ իրենց որսը ձեռքէ չեն թողնուր, մինչեւ զայն չոշնչացնեն, կըսէ հասարակութիւնը և սարսափահար կապասէ չարագուշակ՝ օրւան:

Այդ սարսափին ուժ տին և „Երիտասարդ Թիւրքիային“ գեսպաններուն ուղարկած շօքաբերականը և փողոցներուն մէջ ցրւած յայտարութիւնները, որով հրաւէր կը կարգացէր տաճիկ ժողովութին, ուուրս գալ սպասողական անշարժ դրութենէն և հետեւիլ հայ յեղափոխականներուն միջոցին:

Եւ անոնք, որ ստիպւած են շուկայ ելլեւ և հնարաւորութիւն չունին մենեկի մէջ փակւելու, ապահով չեն կենդանի տուն վերադառնալու: Հարկ չկայ այդ մարդկանց հետ խօսելու. անոնց ներքինը հասկնալու համար, բաւ է նայիլ անոնց գունատ և տիպուր գէմքներուն, մարած աչքերուն, որոնք արագ-արագ գէս ու գէն կը նային, թէ արդեօք իրեն չե՞ն խփեր, թէ մի գուցէ անակնկալ հարւած մը զնիքը գետին փուէ: Կը նայիք ատոնց, այդ կենդանի ուրաւականներուն և կը խղճաք . . .

Կյոյ սատիկանութիւնը աչալուրջ հսկողութիւն ի գործ գնել կը ջանայ, հայ կամ թիւրք կասկածելի բոլոր մարդիկ աջուձախ ձերբակալելով:

Պէշիկթաշէն մինչեւ կիւչանէ տուները վաճառատուները հսկողութեան տակ են: Սուլթանի անցնելիք ձամրուն վրայ եղող բոլոր բնակարաններուն տիրոջ պատսիրւած է չորեքշարթի օր օտար հանդիսատեսները չընկունիլ. երկրորդ, երրորդ յարկի պատուհաններէն չը դիտել: Բոնապետութեան ականջին մէջ դեռ կը գուայ Դաշնակցական հերոսներուն ուռմբերը և կը դողայ բռնակալը ու իր ամբողջ աւազակախումբը . . .

„Ուր հալածում, անդ տարածում“—ը կէտ առ կէտ արմատներ ձգած է շնորհիւ Համբաւ վայրագ բռնութեան. հայ յեղափոխականը չի կրնար զսպել իր ուրախութիւնը, երբ իր ցանած սերմերուն աճիլը և ուռածանալը կը տեսնէ:

Թիւրք հայրենակիցներու գժգոհութիւնը չափազանց է: „Մէճմիսի մէպուսանի“ (Երեսփոխանական ժողով) խօսքը ամենատգէտ թիւրքին բերանն է այժմ և կը կարծեն թէ այդ ժողովը՝ ամեն չարիկներու վերջ պիտի տայ: Այդ հաւատքն ալ բաւ է: Բայց շնորհքով կազմակերպութեան պակասութիւնը և իրենց բռուն եռանդը, զոր ամրութեան կը դատապարտէ ցաւալի անփորառութիւն մը, պատճառ կըլլան խմբերով ձերբակալներուն: Ձերբակալւածները կաբսորին հեռաւոր վայրեր, թէ իրենք կըսեն թէ ծովը կը նետեին: Համբաւէն ամեն բան կը յուսացւի: Հիմա հայ մայրերուն

հետ տաճիկ մայրերն ալ կողքան իրենց սիրասուն զաւակներու կորուստը, և հայ կիներու անէծքին կը միանայ տաճիկ կիներու անէծքը և վրէժինդրութեան ճիշը մարդախոշը գազանին դէմ:

\* \* \*

17-ին փետր. (Ն. տ.):— Ճակատագրուկան օրն է: Փողոցներուն մէջ մեռելութիւն կը տիրէ, Պոլսոյ կողմը խանութները գոյց են: Ճամբուն երկայնքը երկու կողմէն զինուորական կուռ շղթաներով կապւած է և երթեւեկութիւնը կանդ առած: Զինուորներ ու շներ կան մէտեղը: Ժամ 11-ին պալատական կառքերով հարեմական անվերջանալի մեծաշուրջ թափորն է, որ կանցնի. իսկ սուլթանը . . . օ՛չ վատը ծովով գացեր է, ծովով ալ վերագարձեր:

Սովորութիւն է, երբ սուլթան մը ծովային փաքը կամ մէծ ճամբորդութիւն մը կատարէ թնդանօթի 101 հարւածներ կարձակւին. այդ ալ չեղաւ: Սակաւաթիւ ամբոխը, որ հեռէն հայրեկ կը դիմէր, տեսնելով խայտառակութեան լրումի, քթին տակէն ժպտելով ցրւեցաւ:

Համբաւ այնքան ստոր, սյնքան ցածհոգի արարած մ'է, որուն սրտին մէջ ընտանեսիրութեան զգ ա ց ո ւ մ'ն իսկ չկայ: Հոն, ուր իրեն համար վտանգ կայ, իր ընտանիքը կը դոկէ մէծ շքով, որպէսզի յեղափոխականները իրենց նպատակին մէջ խարւելով՝ ի դերե ելլեն:

Օրը հանդարտ անցաւ:

Այս ընդհանուր սարսափին մէջ, միայն յեղափոխականն է, որ հանդիստ սրտով, հեղնական ժպիտով կը նայի այդ տեսարանին վրայ. ան զգգայ իր ոյժը, կը տեսնէ, որ այդ սարսափը իր հարւածներու հետևանկքն է, որ իսկապէս ան է այսօր երկրի դրութեան տէրը: Յեղափոխականը կը տեսնէ, որ կառավարութիւնը կը սոսկայ իրմէ և կզգայ թէ ներկայ կացութեան բանական իր ձեռքն է, որ ինքը կարող է տակնուլքայ ընել ոչ միայն Պոլիսը, այլև ամբողջ Եւրոպան, որովհետեւ Եւրոպաի խաղաղութիւնը կապւած է ներկայիս մէջ, Օսմաննեան կառավարութեան գոյութեան ու խաղաղութեան հետ: Կրետէի գէպքը չի շւարեցներ զայն: Եւ երբ, յեղափոխութիւնը իր ափին մէջ կը կրէ արեւելեան ինդրի բանալին, անիկա բոպէ մը չի յուսահամբր և ոչ ալ կը նահանջէ. ապագան իրենն է և միշտ առաջ կընթանայ . . .

\* \* \*

Յ. Գ.— Տէլի-Գուռադ փաշան, որ տաճիկներուն մէջ անկեղծ մարդու համբաւ կը վայել է՝ փախած է:

— Բարեկենդանի մօտենալուն առթիւ կառավարութեան կողմէն եւրոպացներուն, յոյներուն, հայերուն յայտարարութիւններ կըլլին, որ պարահանդէսներ տան, ուրախութիւններ ընեն և խրախճանքներ կազմեն, մոռացնելու համար ժողովորդին կրած սարսափները . . .

Կրետէի համար նոր սուտեր շատ տաճիկները կատած են, բայց ի՞նչ օդուտ, խածնելու ակույ չունին . . .

— Զմիւնիայում՝ յոյն թէ տաճիկ սաստիկ զրգութեան մէջ են: Երկու կողմն ալ մէծ եռանդով զէնքի պատճառ տառապութեան մէջ են: Վալիի հրամանաւ ժամը 6-էի սկսեալ բոլոր սրճարանները ու գինետները պիտի գոցեն:

— Ինսպանները կը գումարուին ու կը գումարուին, սպասել և յուսալ. ոչ կուել և յուսաւ . . .

## ՆԱՄԱԿ ԵՐԱՆԿԱՑԻՑ

18/30 յունար 97 թ.

Սուլթանին կառավարութեան բարոյական քայլայումը, որքան որ հսկայական քայլեր կը լնէ, անիշխանութիւնը նրա մէջ այսօր առաւել քան երբէք զդալի է: Նրա աներես պաշտօնեայքը առաւել քան հայն՝ յուսակտուր դարձեր են իրենց ապագայի մասին: Նրանք այլևս չեն խորհիր այդ խարիզուն վիթխարի շենքին տալ մի որ և է նորոգութիւն, խորապէս համոզւելով մի անգամ ընդ միշտ՝ թէ նա դատապարտւել է սոսկալի և խայտառակ կործանման մը: Ուստի այժմ նրանք անկուշտ տղբաւեների պէս հայու արիւնը ընդ երկար ծծելոց յետոյ՝ էլ իրենց աչքերը դարձրել են նիւթապէս բոլորովին փացացած հայէն դէպի վերջին աւարառութիւններով պարարտացած քրտուն: Կառավարութիւնն ինքն էր, որ հրաման տեսց վայրակ քրտուն երթալ սպաննել աւերեց այրել ու քանդել ինչ որ սեփական է հարուն: Խոկ այժմ՝ էլ ելեր. հաշիւ կը պահանջէ նրանից այդ գժոխային գործոց համար: Գաղանի կը բերէ քրտերից իր մօտ, սպառնալիքներ կը տեղայնի անոր գլխուն և զայն ալ կեղեքելէն ետքը միայն ազատ կը թողու և այսպէս կողոպտւած հայուն հարստութիւնը հետազիւէ կը հաւաքու սուլթանին անիրաւ կառավարութեան ընչարաղ պաշտոնեաների մօտ, որոնք մծ փոյթ գործ կը դնեն տեղաւորելու երրոպական մի որ և է պանքում: Մուայլ ապագայի մասին ի գործ գրաւած սոյն նախահոգ հեռաւեսութեան օրինակը կուգայ շատ վերէն, ոչ ապագեն սուլթանն ինքն ալ նոյնը կը լնէ իր այնքան անիրաւութեամբ չորմած առասպելական գումարների վերաբերմաք, հոգ չէ թէ անդին պետական գանձարանում միները մծ գատարկութեան մը մէջ նիրիտ կը խաղան Այս գատարկութիւնը սուլթանը թէն կաշատէ լցնել մասամբ իր նախագահովնեան ներքոյ բացւած վերջին հանգանակութեամբ, սակայն դժւար թէ ամբողջովին յաջողի նա այդ գործում, զի հանգանակութիւնը պիտի կատարւի աւելի իսլամ՝ ժողովրդից և սա լնդունակ չէ ամենախ հայրենասիրական բարձր ձգտութիւնը նա զի գգար իր հայրենիքին սպառնացող ահագին վատանգը և այդ վատանգի առջև պահանջեած ոչ անձնիրութիւնը ունի, և ոչ ալ զոհոցութիւնը: Սուլթանը եթէ այս կէտում չէ կարող դժնել ամրոջական յաջողութիւն, կը յաջողի սակայն մի այլ բանում: Նա այս առիթով կը յայտարարի: — Հանգանակութեան մասնակցող հայը հաւատարմութեան զօրաւար ապացոյց մը տաւծ պիտի ըլլայ սուլթանին: — Այլք որ հայը պիտի յանդինի բաց ննալ հանգանակութեան գործէն, որը պարզ ապստամբական քոյց պիտի նկատվի կայսերական կառավարութեան դէմ Ծեղզաք կառավարչն յատուկ ազդարարութեամբը օրերում ազգային հայութիւնը ներքին հայութիւնը ստիպենց ազդարարի մատուցանել և ինդիրել կառավարութիւնը ընդունեց հայոց:

Խնդիրքը և շատ ուրախ մնաց իր այս յաջողութեան վրայ, որը առժաման հեռագրեց Բ. Դրան: Միւնոյն վլանը ի գործ գրաւծ է և այլ հայաբնակ գաւառներում և գաւառացի հայը ներկայ փափուկ հանգամանքներում հարկագրած է կամայ ակամայ համակերպի և գլուխ ծոել կառավարութեան այս նենգամիտ պահանջին:

Նախորդ յօդւածովս արդէն տեղեկացրի ձեզ ակնցի տարաբախտ ձանիկի ողբալի մահը, ինչպէս նաև այն սպանութեան փարձը, զոր կատարեց թիւրք սրիկայ, մը, խնձորեկցի Անտօն անուն հայ երիտասարդի մը վրայ: Այսօրինակ եղերական գործեր կը շարունակեին շնորհիւ այս անիշխանական դրութեան, զոր կառավարութիւնը ի գործ կը դնէ ամենայն պաղարինութեամբ: Օրերում հայ երիտասարդ մը Ագրակ գիւղից դաշունահար ինկաւ Ռւսիկ գիւղացի մի թիւրք սրիկայից: Ռւսիշ թիւրք մը սրիկայ ալ Մեղացիք գիւղում հայու մը տան մէջ զէնք կը պարպէ և տան բնակիչները կը սարսափեցնէ, խեղճ հայերուն անհնար է դարձած իրիկւայ արեւմտից յետոյ տանը դրնից գուշը ոտք դնել և իր հարևանների հետ յարաբերիլ:

Դիկիրէկ-Բլուր գիւղէն ուրիշ երկու թիւրք սրիկաներ գարանւած Հոռամ-Ագրակ գիւղի այգեստաններու մէջ՝ կը յարձակին երկու հայերու վրայ (մինը պատանի) և կուզեն առևանգել մի մանկամարդ հայ կին, զոր նրանը (հարսին տագրը և եղբայրը) կը փոխադրէին Հոռամ-Ագրակից (ծնողական տնից) Մէզրէ՝ իր ամուսնուն տունը Հայ կտրիձները թէն անզէն՝ մծ քաջութեամբ կը դիմադրեն, և գժմաղդրաբար երկուքն ալ դաշոյնի հարւածներով ծանրապէս կը վիրաւորին Կուի միջոցին հարսը բլուրի մը գագաթ կը վազէ բլուր ձայնով հաւար կը կանչէ: Բարեթապարաբար իսկոյն օգնութեան գիւղուներ կը լինին, որոնց ջնորհիւ վերահաս վագատւի հարսը Զարագործները խոյ կը տան, վիրաւոր երիտասարդները կը փոխագրեն գիւղը: Մինը մահամբ վիճակի մէջ ինկաւ: Դասն վիշտ, սարսափ և յուսահատութիւն միանգամային կը պատճառի այս վատ դրութեան անպաշտապան հայերուն որոնք անձնապաշտապանութեան ամեն միջոցներէ զուրկ են:

## Փ Ի Գ Ա Յ Ի

(Ն Ա Մ Ա Կ Ա Ա Խ Ո Ւ Թ)

Անիրաւութեան ու բոնութեան գէմ՝ բողբող ժողովների մէջ, նախ քան ընդհանուր կուրիւը, ապաստամբութիւնը, լայտնուում են այսպիսիք, որ մորթացնուում են տիրող բաղադրաները, ներկայացնուում են, որպէս ընդհանուր բողբողի իրիւն: Խօմնային ուսեկուները Յունաստանի կէֆտիները, Բուլղարիայի հայդուկները եղան նրանց աղատութեան կարապետները: Մրանք էր որ կաղմակերպեցին և ընդհանրացրին ապստամբութիւնը իրենց օրինակով:

Այսօր ել հայ Փիդային է իւր ժողովրդի արդար

բողոքի մարմնացումը: Նրա կեանքը կռիւ է ընդգեմ  
անողոք բռնակալութեան, կռիւ ի վրէժ հարիւր հա-  
զարաւոր անմեղ զոհերին Հեռացած իր ընտանեական  
յարկից, ուրացած անդորրաւէտ, հեշտալի կեանքը, նա  
թափառում՝ է աստ անդ, փնտում՝ է կռիւ և արկած: —  
Երբ գոռում՝ է մարտը թնդում են լեռները հրազդնուց  
ահեղասաստ բոմբիւններից, երբ աշաբեկ, նկուն թըց-  
նամիք փախուստ են տալիս, եռ է գալիս նրա սիրտը,  
և ցնծում՝ է նա, որպէս պատերազմի աստած, որ մի-  
այն այս գոռ, արհաւրալից հանդիսում կարող է խանդ  
ու հաճոյք զգալ Ընկնել դէն ի ձեռին թշնամու ա-  
րինը թափելիս, աշա այս է նրա ցանկալի մահը:

Փիդալին, որի ախրագործութիւնները հռչակ են ըստացել, և որ պաշտպանել է շաաերի կեանքն ու ինչքը, հայ ժողովրդին՝ հիացման հրեշտակ է, իսկ թշնամուն՝ սարսափելի ազրայէլ: Հայը գովում, փառաւառում է իր Փիդային, հիւրընկալում և առաջնորդում է նրան. բանաստեղծները երգեր հիւսելով՝ պատմում են նրա նախաճիւները, ոգեւորում ժողովուրգը և յորդորում քաջերին, որ գառնան Փիդայի՝ կոիւ մղելու բռնակալի դէմ: Իսկ թշնամին, որ ունի ահագին ոյժ, միծ բանակներ, որ մորթում կոտորում է հազարաւոր անմեղներ, և որ խրոխտում է հզօր պետութիւնների առաջ—վախենում է փիդայից: Իր աշեղ զորութեամբ, իր քանդիչ թնդանօթներով չկարողանալով սարսափեցնել և ընկճել նրանց՝ գերբնական զօրութիւն է ընծայում նրանց: Մի տեղ յայսնել են Փիդայիներ, այդ անըմբոնելի, անմահ էակները, ինչպէս համարում են նրանց, այնտեղ թշնամիները հանդիսա չեն կարող քնել երկիւլից. քիւիտ գիւղերում նրանց գալը լսելիս, առհասարակ շտապում են փախչել լաց ու կոծով: Տեղ տեղ քիւրաւերը երգեր յօրինելով մեր Փիդայիների վըայ՝ գովում են նրանց քաջութիւնը. վեհանձնութիւնը և զէնքերի կատարելիութիւնը:

Արքան փառաւոր, այնքան էլ փոթորկալի է սակայն փիդայի հական կեանքը: Չունի նա երբէ՛ք հանգստութիւն, ոչ գիշեր, ոչ ցերեկ, ոչ գիւղերում, ոչ քաղաք-ներում, ոչ սարերում, ոչ ձորերում: Ենթակայ է նա միշտ ցրտի, քաղցի, ծարաւի: Իւրաքանչիւր րոպէ սպասում է նրան թշնամու գնդակը կամ բանտը իր գլուխույթին տանջանքներով: Ըստ անդամ բարիարոս կառավարութիւնը բնաջինը կոտորած սպառնալով նրան հիւրընկալող քաղաքին կամ գիւղին, տաժանելի գրժւարութիւնների է մատնում նրան: — Ստրկացած, անբարյական ամբոխը, քծնող, փոփոխամիտ աղաները, որ առաջ դրւատում էին քաջ փիդայի նրան էին պարտական իրենց կեանքն ու ստացւածքը, մահւան սարսափի աւերիչ ազգեցութեան ներքոյ, սկսում են գտապարտել նրան, սրիկայ, աւազակ, մարդասպան կոչել և . . . մատնել: Փիդային մնում է մինակ իր զայրացի և կատաղութեան մէջ. նա դառնութեամբ տես-

նում է՝ թէ ի՞նչպէս իր ազգն էլ միացած է թշնամու հետ իր դէմ: Բայց նա համբերատար է և ներող նա արդէն կատարեալ Համակամութեամբ մտել է այս փշալից ասպարեզը, փառաւոր ապագայի անվընէպ յաղթանակի յուսով: Գալիս է զօրքը մատնիչների առաջնորդութեամբ, որոտում են թնդանօթները, կուրու բուռն է: Ֆիդայիները, անվօդով և արի, ոգեսորւած մի երկնալին աւելնով: Ա՛ երգում են, և' մարտնչում: Թշնամին զայրագնած, կրկնապատկում է իր ոյժը, բայց ի զուր: Ֆիդայիները, փուելով վախկոտ զինուրների դիակները, անցնում են խրոստ և անյաղթ: Ահա նրանք մի այլ տեղ պաշարւած քիւրտ և թիւրք զօրաց բանակով: Դարձեալ կուր անհնարին: Նրանք հրաշք են գործում: Առից պատուելով թշնամու գունդը՝ անցնում անյայտանում են, ի հիացում և ի սոսկում անարգ ոսուներին:

Թող արեան ծարաւի բռնակալը շարունակէ իր կործանարար գործը, թող անմեղ հայ ժողովրդի արինով ողողէ մեր հայրենիքը, թող բազմապատկէ նա իր փարասիրա զօրքերը և գրգռէ իր գաղանական. իսուժանը, հայ Փիդային էլ կը շարունակի իր սուրբ կոխւր, որ աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում. գժողովների, զբէժինդիրների և անձնուրաց գաղափարականների թիւը ստուրացել է արդէն: Փիդայիսական բազմաթիւ խումբեր, մղելով անընդհատ կոխւ, կարող են կործանիչ հարւած տալ սուլթանի զօրութեան: Հայ շաղակարատ դիպօմատների ճառերը, մարդասէրների ճռումաբանութիւնները չեն կարող փրկել քեզ այլ միայն քոյ ժը: Կը բացւի գարուն, բնութիւնը յարութիւն կառնէ, դու էլ կենդանութիւն ստացի՞ր, ոչինչ չեն թողել քեզ խաղաղ ապրելու համար. մերկ ու սոված տանջւելով մեռնելու փոխարէն, սկսէ պատով մեռնել: Եղի՞ր Փիդայի, զէնք չի պակասիլ քեզ, եթէ փնտուային, ինչպէս հաց՝ ապրելու համար . . .

Ըարժւի՞ր ֆիզայի, պարզե՞ր քո յեղափոխական դրօ-  
շը և հայ ժողովուրդը քո հետն է . . .

ՊՐՈՍՈՒՅ 14-Ի ԱՐՑԱՎԻՇՎԻՆԵՐԸ

( Օսմանների քաղաքականության պատմութիւնը )

Եթե մեր բուռն յաղափոխականների եւ Մաքսիմովի մէջ բանակցութիւնները վերջացան, երբ մեր երկու առաջնորդները՝ Արմեն-Գառնի, եւ Հրաչյա, եւ մինչ 16 քաջ մնկերները դուքս եկան իսկ յաղթական ճերուններ, ատրամանակները ծնողքերին ու անցան ալլէանական ապագ զօրքերի պիտակատ շղթաների մէջու մենք՝ վեց վերաւորներս մասցից մի քանի բուլէ պանց Օթթամանի մէջ: Մենք վեց տղի էինք: Մեզամնից մէկի ծեռող բուրուրին կորուած ընկած էր եւ երեսը անոնդումին լցուած սուրբի կորուներն, երկրորդի սոխ սոխու ընախական, իսկ մասցած ըստ ուեւ կորուրումն էինք, ոսկեց ու թեւելու վերաւորներ, օգնու մար մնկերներին, սակէ մազ յանձնանձ կէտերի կար, մահաբեր սուրբած ծնողքերին պատրաստ:



## ՍՈՒՐԱՅԱՆ-ՀԱՅԻ ԵՒ ԽՐԳԱՅԻ-ԹԵՐԻՓԵ

Սուրայանալի կերպով անցան-գնացին այն երանելի օրերը, երբ Տաճկաստանի պետը, բոլոր հաւատացեալների եւ անհաւատաների տէր Սուլթան Համիդ բնակալը՝ գլուխը բարձր բռնած, իր անսահման ուժի վրայ վստա՞ն համարձակ ընթանում էր ղէպի Թօփ-Գարսի պալատը՝ Մեծ Մարզարէի վերարկուի քղանցքը ծնչքաշոք համուրելու Մարզարէի խրզայի հորհքին ու գորութեան է պարտական ինքնակալ սուլթանը իր անսասան պետութիւնը:

Սյո տարւայ ղէպերից սարսափած ու իր պալատում կծկած բռնագլուր անլուր հայնոյան քններ թափելով վերարկուն համուրելու վանգաւոր սովորութիւնը մոցնողի դիմին, ոչ մի պայմանով չէր ուզում այս անգամ դուրս գալ պալատից եւ վերարկուի սուրբ չնորհքից օգտակը: Ծառ անքուն գիշերներ Ալլահին գոյնի արեց, որ նա այդ «գառը յաժակը» իրենից հեռացնի կամ շէյխիւլ-խոլամին ներչնչի անգութ վերարկուն պալատը ուղարկել: Բայց ի գուր Ալլահն ու շէյխիւլ-խոլամը խուլ մնացին, և Համիդ բռնապետն ստիպւած եղաւ ան ու գոյնի մէջ, փողոցներում ազատ պատող չներին նախանձելով, ծովով ղէպի Թօփ-Գարսին զարտագողի փախչել:

Ի՞նչ խօսակցութիւն նա ունեցաւ այստեղ: Հայնոյեց արդնօք Մեծ Մարզարէին, որ հիւրիներով զբաղւած՝ չի մոածում բնաւ իր գժբախտ տեղապահի մասին, որ թոյլ է աալիս սիրով գեավուրներին մի ինչ որ ոգնասով՝ գլուխցնել ու սարսափեցնել հաւատացեալների պետի հոգին եւ, բացի այդ, վաս օրինակ լինել նոյն իսկ ուղղափառ հաւատացեալների համար: Խոսսովաննեց արդեօք իր մեղքերը, որ կտորել չուեց մի անգամից բոլոր հայ եւ կրէտացի դեավուրներին, որ հաստատ չմնաց բռնականների նշանարանին՝ „միայն դիակները չեն ապստամբում“: Թէ յոյսը կորած խրդայի գորութիւնից, ողբում էր սամանեան պահի անխուսափելի խորտակումը. թէ նա երկիւղից պապանձւած ոչինչ չէր մոածում, ոչինչ չէր ասում, սրտառոփ սովասելով սումբի անեղ որոտին կամ ատրճանակի պայթումին . . .

Դառն է Համիդի գրութիւնը, խոսսովանում ինք: Սակայն կարող ենք հաւատացնել բազմատանջ Ոճրակործին, որ իր այս տանչան քնները վերջնին են լինելու: Անհաւատների եւ հաւատացեալների ջանքերով ամեն միջոց ձեռք կառնեին, որպէս զի առաջիկայ տարին, ուանազանի տօներին, Դազի Սուլթան Համիդը այս տարւայ սոոկալի տանչանքներին այլեւս չմատնելի:

## ՎԻԼՔԵԼՄ ԿԱՅՄՐԸ

Սուլթանի բռնապետութեան տակ հեծող ապստամբ ժողովուրդների գէմ յայտարած սուր արշաւանքի մէջ վիլկելմ կայսրն է, որ իր ձախլիկ մարմասով ամենից շատ վեր վեր է թռչում. դիվլումատների բարձրացրած աղմուկի մէջ նրա գուռուն գոյինն է ականջ ծակում կրէտական շարժման ոկզին, երբ Յունաստանը չանաց Եւրոպայի խորհրդին, վիլկելմ կայսրը խորված յետ քաշւած

էր թւում: «Երանի այն այգուն, որից արջը կը խոռվի» մոածում եւ ուրախանում էին բոլորը: Բայց գարձեալ լսելի եղաւ այդ արջի մրթմրթոյը, որը շատ չուտով ահեղ գուոցի փոխած խլացնում է այսօր բոլոր միւս ձայները: Վիլկելմ կայսրը, որի պարանոցին կապած շղթայի ծացը գեռ Բիսմարկի ձեռքին է պահւած, կրուպպի թնդանօթը դրկած, պտում է թաթիերի վրայ եւ փրփրած բերանով շանթեր արծակում սուլթանի անգորութիւնը խանդարող ապստամբների գէմ: Յանուն իր ֆլուանիսների շահերի, յանուն օմանեամ փթած զիակի ամրողութեան բիսմարկիս ոգով ապականած Եւրոպան լրբութեամբ պահանջում է մնզանից ու Նպատակութիւն, անվերջ տանջանքներ, մեր զիակների անթիւ բլուրներ . . .

Վիլկելմ կայսեր ջանքերը գնահատում են ըստ արժանույն: Արդէն Պոլսոյ մզկիթն երում իմամն երը աղօթում են նրա թանկապին կենաց համար: Պատմութեան մէջ նշանաւոր եւտքերը թողնել ցանկացող Վիլկելմը չի հանզէլու ի հարկէ այդ փառքի վրայ: Երածիչտ, նկարիչ, բանաստեղծ, ուղմագէտ, ծովագէտ, մօնարիս—ըէֆորմատօր Վիլկելմը ձեռք կը բերի անշուշտ ի մամ տիտղոսն եւս:

## ՎԵՐԶԻԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպական մարտանաւերի ոմբակոծումը, ճիշտ է, լըբացրեց կրետական բաշխօգուկներին, որոնք յանկարծ տեսան, զարմացան, որ շատ սիսաւ ու աննպաստ գաղափար են ունեցել Եւրոպական քաղաքակրթութեան մասին, ձանաշեցին և սիրով ողջունեցին իրենց Եւրոպական գաղափարակիցներին, բայց ոչ մի վհատութիւն չկարողացաւ առաջ բերել ապստամբ կրետացիների բանակում: Ապստամբները յոյն զօրքի աջակցութեամբ, գրգռւած այդ հարածից աւելի մեծ եռանդով շարունակեցին կղզին գրաւել դիմադրողներին ջարդել և անձնատուր եղած սուլթանի զինուրներին, մերկացնելուց յետոյ, սուլթանին իրը ապացոյներ ուղարկել՝ նրա այրւող սիրտը աւելի լաւ շամփելու չամար:

Բնբակոծումից յետոյ յիմար գրութեան մէջ ընկած խորիմաստ դիպլոմատները իրենց յշամբաշխն սպառնական նօտայով—որով պահանջում էին Յ օրւայ ընթացքում կղզին մաքրել յունական զօրքերից—աւելի յիմար գրութեան մէջ ընկան: Յունաստանը մերժել է: Հարկաւոր է սպառնալիքները գործադրել: Բայց ինչու չեն գործադրում. չէ որ մի քանի օր արդէն անցել է: ի՞նչ եղած գրանց համբաշխութիւնը . . .

Մինչ այս, մինչ այն՝ ահա թէ ինչեր են տեղի ունենում:

—Դրութիւնը խիստ ահաւոր է կրէտէի շատ կէտերում: Ապստամբներն անընդհատ յարձակումներ են գործում տաճիկների վրայ, տեղատեղ յոյն սպաների հրամանատարութեան տակ Եղան ընդհարումներ ապստամբների և բաշխ-բօղուկների մէջ կանդիայի շրջակայքում վերջիններից կայսրը գործադրութիւնը շարունակուում է անդադար: Քաղաքին հրդեհ է սպառնում:

—Ապստամբները յարձակւել են Հիերապետրայի վերայ, բայց յետ են նահանջել, երբ իտալական նաւթ սկսել է նրանց ոմբակոծել 2,000 ապստամբներ բռնել են շրջակայ ու ազմական դիրքերը: Հերակլինի մօտ ծագած ճակատամարտում՝ տաճիկներից սպանել են 6, փիրաւորւել 24 հոգի:

—Եւրոպական նաւերը տենդային արագութեամբ սեղափոխում են, մուսուլման ընտանիքները կրէտարից: Թեսալիայի սահմաններում կինտրոննանում են անընդհատ տաճիկ և յոյն զօրքերը: Առաջինների թիւն է այժմ մօտ 55,000, երգրորդինը՝ մօտ 13,000:

—Սուլթանի կառարութիւնը անընդհատ հեռագիրներով փոխանակուում է պարսից շահի<sup>(c)</sup> և եղիպական խեղիվի հետ պատերազմական պատրաստութիւնների համար:

ՆԻՒՐԱԾԻՌՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ամերիկ. Պախոյէն Վարաժնունի ձեռամբ 1 դոլար: Աւս. Սուչաւա քաղ. Մկրտիչ Թէօպոլեան 1 ֆլորէն: Շվ. Քաղ. Ա. Թ.-ից 5 ֆր.

Տապար քաղ. կենդր. սնդուկի մէջ ստացւած են.

Գաղթավայրէն շլթայ 10 րուբլի, Մէլիքով 5 ր., Թէոպեանց 3 ր., Հովլարար զիւղից՝ Սաթենիկ 15 ր., Փայլակ 10 ր., Զանակ 5 ր., Ճորոխ 6 ր., Արամ 5 ր., Վարժարան 5 ր., Ծերուկ 5 ր., Ենովք 4 ր., Ճորոխ 2 ր., Լոյս 2 ր., Անձրէ, Կայծակ, Արև մէկ մէկ ր., Խնձորիկէն մի ազգասէր 25 ր., Ալիւր 3 ր., Գետեղերքէն՝ Համբարձում 100 ր.

Գաղթավայրից՝ Գ. Մ. 25 ր., Գ. Թ. 25 ր., Հրէշ 5 ր., Վերի Խնձորիկից՝ Մաթոս 70 ր., Աւետիս 50 ր., Հովասուն 10 ր., Ակոր 50 ր., Գետեղերքից՝ Աղասէր 15 ր., Գասպար 5 ր., Պաղտասար 5 ր., Պօղոս 1 ր., Յարութիւն 2 ր., Սերբակ 2 ր., Արծաթ ջրից՝ Սերբակ 10 ր., Սէ-ի Մեծ-գիւղից՝ Յ. Ռ.-ից 25 ր., Յ. Վ.-ից 10 ր., Պ. Ռ.-ից 5 ր., Խոյ գիւղից՝ Կ. Մ. 25 ր., ևս Կ. Մ. 25 ր., Բ. Կ. Եղայրներից 13 ր., Հին հաշուից Խ-ի միջոցով 20 ր., Խ-ի միջոցով 15 ր., Խուշ գիւղի սաներից 11 ր. Արէժ կենդ. կօմիտէի սնդուկի մէջ ստացւած է.

Կ. Կոչան<sup>(d)</sup>-ից Խժեհէի միջոցով 1,000 դր.

Ա-տի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Ա. Կ. Հ. . . 500 զուն, Տիկին Գոհար 400 զու., Ա. Շ. 250 զու., Զ. Յ. 150 զու., Գ. Հ. Զ. 150 զու., Տիկին Թ.-քաջի 1000 զու., Ա. Կ. 100 զու., Տիկին Պ. Պ. 100 զու., Ա. Ա. 100 զու., Տիկին Մ. Հ. 50 զու., Տ. Բ. Պ. 40 զու., Անյայտ 20 զու., Ոմ 20 զու., Անյայտ 10 զու., Արշեստաւոր-Հայդուկից 50 րուբլի:

Փիլիպպովիշ կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Ա. Թ. 2 լէվ, Մ. Թ. 7 լէվ: Թ. Գ. Ծ. 4 լ. Աղաւնի 20 լ. 60 սանտ., Ա. Գ. 20 լ. 60 ս., Եղեարք Թ. 10 լ., Ա. Մ. Մ. 5 լ., Մարգարետունի 3 լ., Ա. Ա. 10 լ., Թիւ 134 5 լ., Տ. Թ. 5 լ., Մ. Ծ. 5 լ., Ա. Ա. 2 լ., Ա. 2. 3 լ., Ե. Ա. 5 լ., Թիւ 100 2 լ., Կացին 5 լ., Ա. Ա. 5 լ., Կ. Ծ. 5 լ., Խ. Ն. 3 լ., Ա. Եղեարք 5 լ., Մկրտիչեան 2 լ. 50 ս., Պ. Թ. 5 լ., Գ. Մ. 2 լ. 50 ս., Գ. Վ. 2 լ., Մ. Գ. 5 լ., Արթին 7 լ., Ն. Տ. 5 լ., Գ. Դ. 5 լ., Ա. Պ. 5 լ., Թ. Ա. 4 լ., Գ. Ա. 1 լ., Մ. Պ. 1 լ. 50 ս., Անժելիք 5 լ., Գ. Ա. 2 լ., Ա. Ծ. 2 լ., Արցախ 103 լ., Կուման 103 լ., Ոսկերիչ 103 լ., Մեծ Եղեարք 82 լ. 40 ս., Փոքր Եղեարք

103 լ., Կոշկակար 35 լ., Լուսնթագ 101 լ. 50 ս., Պ. Ե. Երեց 103 լ., Ա. Ե. 5 լ., Մ. Թ. 2 լ., Սև հողեր 10 լ., Պ. Թ. 2 լ., Ն. Ծ. 2 լ., Մուրադ 5 լ., 2 սրու լնկերք 24 լ., Պ. Վ. Երեց եղեարք 24 լ., Ա. Ա. 6 լ., Մ. Պ. 5 լ., Կ. Մ. 5 լ., Տ. Գ. 5 լ., Մ. Գ. 3 լ., Կ. Ա. 5 լ., Մ. Ծ. 2 լ., Ե. Խ. 1 լ., Ա. Հ. 4 լ., Ա. Ա. 1 լ., Մ. Խ. 1 լ., Թ. Ե. 1 լ., Ա. Թ. 1 լ., Բարեպաշտ ոմն 1 լ., Կ. Պ. 6 լ., Մ. Վ. 6 լ., Մ. Խ. 10 լ., Բ. Պ. 1 լ., Մ. Կ. 10 լ., Ա. Ա. 10 լ., Հ. Ա. 2 լ., Կ. Ծ. 10 լ., Մ. Ս. 5 լ., Պ. Թ. 2 լ., Ոմ 1 լ., Ա. Ա. 3 լ., Կրտակցիք 30 լ., Կրտակցիք 4 լ., Մ. Վ. 1 լ., Փ. Ա. 3 լ., Ա. Խ. 5 լ., Թ. 2. 5 լ., Ա. Խ. 5 լ.: Գարապունար կայարանի Արապօ խմբէն 24 լէվ 60 ս., Նոյն կայարանի Պետօ խմբէն 11 լ., Նոյն կայարանի համակրողներէն 7 լ., Խար-Կայի Առատաձեռն խմբէն 90 լ. 20 ս., Գայաճըգ կայարանի Գնունի-Սասուն խմբէն խմբէն 51 լ. 50 ս., Նոյն տեղի համակրողներէն 14 լ., Հասկօվյոյի ազգայիններէն 43 լ., 2 ըրբան կայարանի Առիւծ խմբէն 18 լ., Նոյն կայարանի համակրողներէն 11 լ., Պորիսովկրատ կայարանի Հմաւսն խմբէն 91 լ. 50 ս., Նոյն կայարանի համակրողներէն 46 լ., Սարամպէյ կայարանի Սունէն խմբէն 12 լ.

Վարնայի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Աստղիկ Խումբ 7 ֆր. 50 սանտ., Վերջալցյա խումբ 5 ֆր., Աշխէն խումբ 8 ֆր. 60., Փայլաճու խումբ 4 ֆր., Աղուէս 2 ևս 2 ֆր., Մուրճ 5 ևս 4 ֆր., Դրիչ 4 ևս 4 ֆր., Դշխուլի 4 ևս 4 ֆր., Զոր 4 ևս 4 ֆր., Քար 2 ևս 2 ֆր., Ճնձլուկ 3 ևս 3 ֆր., Թապէլա 2 ևս 2 ֆր., Զաւար 1 ֆր., Թիւմէկ 2 ֆր., Նեփթազիմ 2 ֆր., Մատլէն 2 ևս 4 ֆր., Պէլ 2 ֆր., Այգն 1 ֆր., Վիշապ 11 ֆր., Ընորէք 3 ֆր., Գերեզման 3 ֆր. Ասատուրից 2 ֆր., Թուիչ խմբէն 4 ֆր.

Քաջունիքէն՝ Արաքս-Քաջունի 5 դհ., Արմէն 5 դհ., Հայրենասէր 5 դհ., Վեհանուշ 5 դհ., Խ. Թուղթ և Աշխատասէր 2 դհ.:

Հայդուկներէն՝ Թափառական 5 դհ., Կայչ 5 դհ., Փամկուշտ 5 դհ., — Ռումբէն՝ Գայլ 5 դհ., Հայկ 5 դհ.

Եամպօլի սնդուկի մէջ ստացւած են.

Խար-Կայի Առատաձեռն խմբի գանձանակէն 18 լէվ 5 սանտ., Գայաճըգ կայարանի Գնունի խմբի գանձանակէն 15 լ., Շատնէ-Մահալլէ Ոմն 2 լ., Սթրալճա կայարանի Մօսինի խմբի գանձանակէն 40 լ. 35 սանտ., Նոյն կայարանի 4 պանդուխաններէն 4 լ., Գանուպաթ կայարանի Աղատութիւն խմբի գանձանակէն 72 լ. 30 սանտ., Նոյն խմբէն կրկին 21 լ., Այգոս քաղաքի Ժիրայր խմբէն 33 լ., Գարապայիր կայարանի Մարտիկ խմբէն 13 լ.

## Ա Զ Դ

Հաստատ աղբեւրից աեղեկանում ենք, որ Հայ գաղթականների հետ միասին Բօլգարիա մուտք են գործել և բնակութիւն հաստատել բաւական թւուվ Հայ լուսեներ: Զգուշացնում՝ Ենք բօլգարաբնակ հայերին և հրաւիրում նրանց հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ այդ գարշելի սողուններին իրենց միջից դուրս քշելու:

Խմբագրութեան գիմել հետևեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)